Ի նուազիլ Հայոց ազգի,
Ի դառն եւ նեղ ժամանակի,
Յաղթող զօրեղ երեւեցար,
Քաջ զինաւոր տէր Աւետիս։
Սարսին ի քէն ազգն Տաճկաց,
Զի յաղթեցեր նոցին զօրաց.
Զարքայական զէնն Քրիստոս,
Տէր Աւետիս, քեզ պարգեւեաց։
Արիական զօրօք քոյին,
Յաղթեցեր չար Գրիգորին,
Զի ուրացաւ զՔրիստոս,
Դու կտրեցեր զլուխ նորին։
Հասեր արագ բերդն Մեղրին,
Սատակեցեր զՆարաճին.
Երեսն հազար թուղթ Նարաճին
Այրեցեր ի մէջ կրակին։
Ազնիւ զօրօք քաջ եւ ընտիր,
Ազուլեաց դաշտն ճէպէիր.
Անարգողաց սրբոյ Խաչին,
Տէր Աւետիս վրէժխնդիր։
Կրկին խնդրեմք արիանալ,
Պալի Պէկին զինուորանալ.
Հայոց ազգին թեւ եւ թիկունք,
Տէր Աւետիս, բարեաւ երթաս։
Երէցս ապիկար անարժան,
Խնդրեմք սրբոցն համանդամայն.
Խաչեալ Աստուած, Տէր իմ Յիսուս,
Տէր Աւետիս քեզ պահապան[20]։

Հրտ. Հ. ՍԱՄՈՒԷԼ ԱՐԱՄԵԱՆ

20. *Սոյն քերթուածը հրատարակած է Հ. Եղիա Վրդ. Փէյիկեան (տե՛ս* Բազմավէպ *(ՂԶ) 1938, թ. 6-9, էջ 187)։*

Ս. ՂԱԶԱՐՈՒ ԵԿԵՂԵՑԻԻՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ՀՐԴԵՀԷՆ ՑԵՏՈՑ*

(Գրեց՝ ԱԼՊԵՐԹՈՑ ՐԻՏՑԻ)

Տարիէ մը աւելի անցաւ արդէն Ս. Ղազարի՝ հրդեհին վրայ, ու տակաւին ինծի հնարաւոր չեղաւ իրականացնել ծրագիրս՝ պատմա-ղեղագիտական լրիւ ուսումնասիրութիւն մը նուիրելու այս կղզեակին. ու թերացումիս գլխաւոր պատճառն է իմ կամաւոր փոխադրումս դէպի երկրաշարժէն աղէտեալ Ֆրիուլի։ Ուստի, պիտի գոհանամ հրատարակել հոս լոկ հակիրճ տեղեկութիւններ Ս. Ղազարի մասին,

*) *Այս յօդուածը, այժմ վերամշակուած, իտալերէն լեզուով նախապէս լոյս տեսած է* Atti dell'Istituto Veneto di Scienze, Lettere ed Arti *հանդէսին մէջ, Վենետիկ, հտ. ՃԼԵ (1976-77), էջ 323-337,* Rapporto da S. Lazzaro degli Armeni *խորագրով, առանց նկարներու։*

1. *Ս. Ղազարու մասին տե՛ս* 1° ՁԵՌԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ *(Ս. Ղազարի դիւանէն).* ԱԼԻՇԱՆ, Ս. Ղազար։ E. UTUDJIAN, Aménagement de l'Ile Saint-Lazare, *Փարիզ* 1940։ M. GAY, Per la sistemazione e l'ampliamento dell'Abbazia Mechitarista di S. Lazzaro, *Վենետիկ* 1943։ 2° ՏՊԱԳԻՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ։ V. CORONELLI, Isolario overo Atlante veneto, *Վենետիկ* 1696-97։ G. RENIER MICHIEL, S. Lazzaro in AA. VV., Le isole della laguna di Venezia, *Վենետիկ* 1828։ G. CAPPELLETTI, Storia dell'Isola di S. Lazzaro e della Congregazione de' monaci Armeni, *Վենետիկ* 1877։ G. ISSAVERDENZ, L'Isola di S. Lazzaro e il Monastero Armeno, *Վենետիկ* 1879։ Հ. Ս. ԵՓՐԻԿԵԱՆ, Ս. Ղազար (*«Բազմավէպ»* 1901, *էջ* 162-215)։ P. MOLMENTI – D. MANTOVANI, Le isole della laguna veneta, *Պերկամոյ* 1904։ P. M. NURIKHAN, Il servo di Dio Abate Mechitar fondatore dei PP. Mechitaristi (Padri Armeni Benedettini) di Venezia, di Vienna, *Հռոմ – Վենետիկ* 1914 (*տե՛ս յատկապէս էջ* 345-357)։ Հ. Ղ. ՏԱՑԵԱՆ, Ս. Ղազարու Նորընծայարանի հիմնարկութեան 200ամեակը (*«Բազմավէպ»* 1926, *էջ* 140-145)։ Հ. Ց. ԹՈՐՈՍԵԱՆ, Վարք Մխիթարայ Աբբայի, *Վենետիկ* 1932։ T. NEDIANI, I grandi rifugi dello spirito. L'Isola di S.

© National Library of Armenia

որուն ջերմօրէն կապուած կը զգամ ինքզինքս՝ իմ Վենետիկցիի եւ կիսահայու հանգամանքներուս (**)։

Զանց կ՚ընեմ ներկայացնել ողբալի ցուցակը մեծամեծ վնասներուն՝ զոր կրեցին Վենետիկեան եւ հայկական մշակութային ժառանգութիւնները, այն խոշոր հրդեհէն, որ Ս. Ղազարու աւանդատունէն ծնունդ առնելով, 8–9 Դեկտ. 1975ի դիշերը, շուտով տարածուեցաւ դէպի վերնայարկի «բոլորակը» (նախկին ձեռագրատուն) ու մերձաւոր վայրերը, որոնք՝ ութհարիւրեան յարկաբաժիններ՝ կը ծառայէին իբր պահեստանոց ու գրադարան[2]։ Բոցերը ատկէ առաջացան մինչեւ յարակից եօթնհարիւրեան մեծ գրադարանը, որու կէսին կասեցան, բարեբախտաբար, հրշէջներուն գնահատելի աշխատանքով։ Կորուստին կշիռը կը ծանրացնեն բազմահարիւր հնատիպ մատեաններ, թանկարժէք սրբազան հանդերձներ, արծաթեայ եւ ոսկեղէն ծիսական բազմաթիւ սպասներ, ընդհանրապէս Վենետիկեան կամ արեւելեան ձեռագործ աշխատանքներ, ինչպէս նաեւ կարգ մը պատկերներ ու Ֆրանչէսքոյ Ծունիոյի որմանկարները[3]։ Կը բաւէ նկատել

Lazzaro degli Armeni, Վենետիկ 1934։ M. A. VAN DEN OUDENRIJN, Eine armenische Insel im Abendland, Վենետիկ 1940։ H. KASANGIAN, Mechitar architetto del suo monastero («Բազմավէպ» 1949, էջ 400–421)։ C. SARTOR, Dall'Ararat a S. Lazzaro, Վենետիկ – Ս. Ղազար 1974, էջ 41–42։

**) Հեղինակը Ս. Ղազարի նախկին Աբբահայրերէն՝ Հ. Յովհան Աւդերի (1877–1947) եղբօր թոռնիկն է, իտալացի հայրիկ։ Այս առթիւ Հեղինակը իր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ Միաբանութեան Ընդհ. Աբբահօր՝ Գեր. Հ. Պողոս Վրդ. Անանեանի, այն սիրայօժար օգնութեան համար՝ զոր վայելած է իր դիւանական պրպտումներուն եւ հնագիտական աշխատանքներուն ընթացքին։ Հեղինակը՝ նախապէս անդամ Վենետիկի Պետական Ցուշարձաններու պահպանման Վերահսկիչ Մարմնին, այժմ գլխաւոր Վարիչն է Ֆրիուլիի համանուն Մարմնին։

2. Այս բոլորաձեւ սենեակը, ուր նախապէս կը պահուէին հայերէն թանկագին ձեռագիրները (փոխադրուած այժմ նոր ձեռագրատուն, որ 1970ին կառուցուած է կղզիին հարաւ-արեւելեան կողմը), շինուած էր 1866ին, իսկ որմանկարները գծած էր Giuseppe Cherubini։ Վերնայարկին մէջ օգտագործուած էին երկու դոթական փոքրիկ սիւներ, առանց խոյակի, որոնք բոցերու ջերմութենէն կոտրտած էին։ Ստորին աւանդատան հետ միասին խնամքով վերաշինուեցան այս յարկերը (Հրտ. Antonio Todeschiniի առաջնորդութեամբ) գործածելով աւանդական շինուածանիւթեր (ձեռքով պատրաստուած աղիւսներ, Իստրիայի քարեր, մայրի փայտէ գերաններ՝ առաստաղի ու տանիքի շինութեանց համար)։

3. Անտարակոյս, ասիկա հրդեհին պատճառած գեղարուեստական մեծագոյն կորուստն է, այնքան որ մեծապէս աղքատ կը մնայ գրադարանային այդ շքեղ սրահը։ Առաստաղը, 1740–41ին, կը պարունակէր երկու բոլորակներ, որոնք կը ներկայացնէին Հայ եւ Լատին Եկեղեցւոյ վարդապետներ, իսկ կեդրոնը՝ խոշոր հաւկթաձեւ մը, ուր նկարուած էր Ս. Կատարինէի դատավարութիւնը։ Հրդեհին մօտիկ բոլորակը ամբողջապէս կորսուած է (Հայ Եկեղեցւոյ չորս վարդապետները), մինչ կեդրոնականէն մնացած է գրեթէ կէսը։ Ողջ մնացած

որ հրդեհը, անտարակոյս, մեծագոյն աղէտն է՝ զոր կրած է Վենետիկի գեղարուեստամշակութային ժառանգութիւնը – եթէ զանց ընենք ճարտարապետական տեղային կարգ մը ապօրինի ձեռնմխումները – համաշխարհային առաջին պատերազմի օրերէն ասդին, երբ աւստրիական ռումբ մը ջախջախեց Կարմեղեաններու եկեղեցիին գմբէթը[4]։

Այս կորուստները, ամբողջական կամ մասնական, կը մնան անփոխարինելի, բացի թերեւս գրքերէն[5]. եւ վերանորոգումները որ կը կատարուին ներկայիս՝ Մխիթարեանց մեծ գրադարանին առաստաղին վրայ, պիտի չկարենան վերընծայել սկզբնական այն պերճանքը՝ որ եօթնհարիւրեան Վենետիկի վանական աղնուագոյն վայրերէն մէկը կը կազմէր[6]։ Պէտք է առելցնել նաեւ որ կորսուած կամ փճացած գոյքերու մեծամասնութեան համար կը պակսի լուսանկարեալ դիւանը, անկարելի եղած ըլլալով իրականացնել այն ծրագիրը, հինգ տարի առաջ ստորագրեալին յանձնուած, ամբողջական ու այժմէական ցուցակագրութեան՝ ի հաշիւ Պատկերասրահներու Վերահսկիչ Մարմնին (Soprintendenza alle Gallerie)։

Տարբեր է, տակաւին, եկեղեցիին վիճակը։ Հոս, արդարեւ, բացի մեծ աւանդատունէն՝ որ ամբողջովին քանդուած էր, վնասները՝ աջակողմեան թեւին մէջ ամփոփուած՝ լայնօրէն փոխարինուեցան շարք մը յայտնաբերումներով, որոնք երեւան հանեցին շէնքին երեքհարիւրեան կազմուածքին զանազան տարրերը, ինչպէս նաեւ բազմաթիւ

բոլորակը (Լատին Եկեղեցւոյ չորս վարդապետները) տեղին վրայ մաքրուած է, մինչ կեդրոնի որմանկարը առաստաղէն բաժնելով՝ տարուած է աշխատանոց (վերանորոգողն էր C. B. TIOZZO) եւ նորոգութենէն ետք՝ վերստին առաստաղին. միաժամանակ սկսած են յարակից գաճազարդերը դուցուած է առաստաղին. միաժամանակ կորսուած մասերը թերեւս հնարաւոր մաքրել ու վերանորոգել։ Որմանկարին կորսուած մասերը ըլլար կիսով փրկել, եթէ հրդեհէն ետք՝ իսկոյն հրահանգ տրուէր գետնէն հաւաքել մեծ կտորները, որոնք կոխոտելէն փոշիացած են։ Ծունիոյ նկարիչին մասին տե՛ս G. M. PILO, Ս. Ղազարու մէջ կատարած աշխատանքներուն մասին տե՛ս Francesco Zugno («Saggi e memorie di Storia dell'arte», II, 1958-59, էջ 326–330 եւ 360–381)։

4. A. MOSCHETTI, **I danni ai monumenti e alle opere d'arte delle Venezie nella guerra mondiale MCMXV-MCMXVIII**, Վենետիկ 1932, էջ 47–68։

5. Այրած հատորներէն մեծ մաս մը (հայերէն գրքեր ԺԷ.–ԺԸ. դարերու) արդէն իսկ փոխանակուած է ուրիշ օրինակներով, զորս Մխիթարեան Հայրերը կարողացան ճարել։ Շուրջ 100 հատոր ալ խոստացած է ուղարկել Հայաստանի Մաշտոցի անուան Մատենադարանը (Երեւան), ինչ որ մեծ ուրախութիւն պատճառեց մեզի։

6. Եօթնհարիւրեան Գրադարանին (1740ին շինուած, ստորայարկի Սեղանատան հետ) փոքր կորուստներէն կարելի է նկատել Մխիթար Աբբահօր մարմարեայ կիսանդրիին ջախջախումը (գործ՝ Giuseppe Fabris արձանագործին), եւ Գրիգոր ԺԶ. Պապի արձանին վնասուած մասերը։

© National Library of Armenia

այլ տարքեր՝ որոնք արդիւնք են այն հիմնական նորոգութիւններուն, որոնց ձեռնարկած է Մխիթար Աբբահայր, իմաստուն Հիմնադիրը Վենետիկեան լճակի այս հայ Հաստատութեան[7]:

Աղէտին վաղորդայնին, լրագիրները իսկոյն հաղորդեցին թէ Ս. Ղազարի եկեղեցին վերանորոգուած էր՝ 1883ին պատահած հրդեհի մը առիթով: Այս տեղեկութիւնը, որ քաղուած է Լորենցետտիի դրքէն[8], ամբողջովին անհիմն է, որովհետեւ այդ տարին պատահած հրդեհը եկեղեցիէն շատ հեռու տեղի է ունեցած, եւ տարածուած է Նորընծայարանի մօտերը, որուն եօթնհարիւրեան կազմուածքը յաջորդաբար փոփոխութիւն է կրած՝ նոր յարկի մը յաւելումով[9]: Լորենցետտիի սխալը կարելի է արդարացնել անով՝ որ շինուածքին նախնական հարազատ գիծերը, 1700ի ընթացքին արդէն այլափոխուած, յաջորդաբար աղաւաղուած էին նոր–գոթական յաւելումներով ու յարարարդումներով, տալով անոր գրեթէ կեղծ նկարագիր մը: Այնուհանդերձ, Պիետրոյ Տոեսկա, իր անդերազանցելի «Երեքհարիւր»ին մէջ[10], Ս. Ղազարը դասաւորած է Վենետիկի գոթական եկեղեցիներու շարքին[11]:

Ս. Ղազարի եկեղեցին, 1349ի ատենները շինուած[12], իր հիմնո-

7. Պետրոսեան Մանուկ՝ Մխիթարի մասին (Սեբաստիա 1676 – Վենետիկ 1749), տե՛ս մատենագիտութիւն թիւ 1 ծանօթութեան մէջ:
8. G. LORENZETTI, **Venezia e il suo estuario,** Հռոմ 1956², էջ 778:
9. Տե՛ս KASANGIAN, **Mechitar** ... յիշ. գ. էջ 418–429, պատկեր 12–14:
10. P. TOESCA, **Storia dell'arte italiana,** II. **Il Trecento,** Տորինոյ 1951, էջ 106, թ. 92:
11. Վենետիկի եւ Վենետոյ նահանգին մէջ գոթական կրօնական արուեստի հետքերու մասին տե՛ս P. PAOLETTI, **L'architettura e la scultura del Rinascimento in Venezia,** I, Վենետիկ 1893: H. THODE, **Franz von Assisi und die Anfänge der Kunst der Renaissance in Italien,** Պերլին 1904²: TOESCA, **Il Trecento,** յիշ. գ.: H. DELLWING, **Studien zur Baukunst der Bettelorden im Veneto. Die Gotik der monumentalen Gewölbebasiliken,** Միւնիխ – Պերլին 1970: Տե՛ս նաեւ A. M. ROMANINI, **L'architettura gotica in Lombardia,** Միլան 1964:
12. 8 Փետր. 1348 (Վենետիկեան ոճով), այն է՝ 1349, կը վերաբերի Ս. Ղազարի հիւանդանոցին, եւ կը կարդացուի արձանագրութեան մը մէջ, Իստրիայի քարէ պատրաստուած (տեղին վրայ) գլխագերանի մը վրայ, որ գլխաւոր մուտքի դրան իրրեւ բարաւոր կը ծառայէր (մինչեւ 1871). տե՛ս G. CAPPELLETTI, յիշ. գ. էջ 8: Թէեւ արձանագրութեան մէջ ակնարկ չկայ եկեղեցիին, սակայն հաւանական է որ անիկա շինուած ըլլայ այդ տարիներուն, ԺԲ. դարուն կառուցուած նախկինին տեղ: ԺԴ. դարու եկեղեցիին դրան իրր հետք, թէեւ դրաւոր վկայութիւններ չկան, սակայն բերանացի հին աւանդութեամբ մը՝ ցոյց կը տրուի գլխագերան մը, նոյնպէս Իստրիայի քարէ յօրինուած (ասիկա ալ Ս. Ղազարի քառանկիւնին մէջ պահուած), որ կեդրոնին վրայ կը ներկայացնէ եպիսկոպոսի մը քանդակը, այն է Ս. Ղազարու եկեղեցիին պաշտպանը (կամ Ս. Լեւոն Մեծը): Այս քանդակը, թէեւ փճացած, սակայն Վենետիկեան դպրո-

վին գոթական նկարագրով, այսպէս կարելի է ներկայացնել. յատակագիծով՝ եռանաւ, անջատուած նոյնաթիւ նախատոյ սիւներէ, որոնց վրայ կը հանդչին սրածայր կամարներ. առաստաղը՝ խոյահանդոյց ցայտուն գերաններով հիւսուած, թեւերը՝ նեղ եւ երկայն ու քառանկիւնի վերջաւորութեամբ, ճակատը՝ բարձրակառոյց, կեդրոնական բոլորաձեւ լուսամուտով, կողերը՝ վերնաձիգ հակամոյթերով ամրակուռ[13]:

Այսպէս դատաւ եկեղեցին՝ Մխիթար Աբբահայր, որ վանական տարեդրութիւններուն մէջ ներկայացուած է որպէս «Ճարտարապետ կարեղրութիւններուն մէջ ներկայացուած է որպէս «Ճարտարապետ նոնադիր ձեւոյ եւ չափու շինուածոյն»[14]: Ինք զայն վերանորոգեց՝ Ժամանակին ճաշակին համեմատ. գրեթէ մէկ մեղր բարձրացուց կողմնակի թեւերը[15], կեդրոնի առաստաղին կամարաձեւ կերպարանք տուաւ, մինչդեռ կողմնակի թեւերուն՝ տափարակ, բացաւ նոր չորս պատուհաններ[16], աստիճան մը բարձրացուց ներկայ դասին յատակը՝ սիւներու խարիսխներուն համեմատութեամբ, ներքին որմերը սպիտակ կճեայ ծեփով պատեց: Բոլոր այս ձեռնարկները, կատարուած 1721–1722ի շրջանին, ճշգրիտ ու ճաշակաւոր եղանակով նկարագրի գործ է, Երեքհարիւրեան: Այս գլխագերանին քով զետեղուած է ուրիշ նշանաւոր մը ալ գոթական եկեղեցիէն, այսինքն՝ Michele Buxego (1443) իշխանի գերեզմանաքարին վերի կէսը, ուր կը նշմարուի տոհմանշանը, առիւծ մը՝ թաթը բարձրացուցած (տե՛ս CORONELLI, **Isolario,** յիշ. գ. էջ 47. յիշատակուած է թուականը՝ 1453):

13. Գոթական պահպանուած ճակատը, Մխիթար Աբբահօր կողմէ կարմիր ծեփով պատած (այժմ սպիտակ է), դժուարաւ տեսանելի է, առջեւը կառուցուած գաւիթին պատճառով. գաւիթը քառանկիւնին հետ կապուած է, թեթեւ մը առ ի ներքին պատճառով. գաւիթը քառանկիւնին հետ կապուած է, թեթեւ մը առ ի ներքին պատճառով մը: Կեդրոնական բոլորաձեւ պատուհանին վերեւ, դուրսէն չեղ, սրահակով մը: Կեդրոնական բոլորաձեւ պատուհանին վերեւ, դուրսէն կարկառուն մարմարեայ շերտ մը կայ, շրջանակը խտրեան քարի առամկարկառուն մարմարեայ շերտ մը կայ, շրջանակը խտրեան քարի առամնազարդերով, որուն վրայ հաւանաբար զետեղուած էր եկեղեցիին պաշտպան սուրբին արձանիկը:
14. Ցաւելուած Ա. «Քննելով թէ՛ Վենետիկի պատմական դիւանը, թէ՛ Ս. Ղազարինը, ամենեւին խօսք չ'ըլլար Francesco Chieza ճարտարապետի գերին մասին, որ իբր թէ – ըստ GIUSTINA RENIERի (**S. Lazzaro,** յիշ. գ. էջ 15 – աշխատանքները վարած է՝ կառուցման ժամանակ. հաւանաբար, երբեմն խորհուրդներ միայն տուած ըլլայ. միւս կողմէ շատ են վաւերաթուղթերը՝ որ կը մատնեն Մխիթար Աբբահօր գործօն ու տեսական դերը» (KASANGIAN, **Mechitar,** յիշ. գ. էջ 404): Մխիթարի գործին մասին, իրր յղացող իր մենաստանի յատակագիծերուն, տե՛ս Ճրտ. Գաղանճեանի յիշեալ գործը:
15. KASANGIAN (**Mechitar** ··· յիշ. գ. էջ 413), այս կէտին մէջ չփոթութեան մը ենթակայ է, սոյն աշխատանքները վերագրելով կեդրոնական նաւին, փոխանակ կողմնակիներուն, ինչպէս ուղղակի ստուգուած է շրջանակի պատէն եւ Մխիթար Աբբահօր մէկ նամակէն (տե՛ս Ցաւելուած Դ.):
16. Այս պատուհաններու թիւին նկատմամբ (4 կամ 6), աղբիւրներուն մէջ՝ նշմարելի անհամաձայնութիւն մը կայ (Ցաւելուած Ա. եւ Բ.), ծագած անկէ որ թեւերու չորս պատուհաններէն զատ՝ ուրիշ երկու հատ եւս բացուած են բեմին վրայ (յետոյ փակուած):

© National Library of Armenia

բաղրուած՝ հայերէն անտիպ գրութիւններու մէջ (տե՛ս մեր Վաւերաթուղթերու Յաւելուածը), աւելի լուսաւոր հանդամանք ընծայեցին շինուածքին եւ զօրացուցին անոր հնչականութիւնը: Հինգ խորաններու կառուցումով[17] եւ կորագմբէթ զանգակատան շինութեամբ (աւարտած 1750ին), եկեղեցին եօթնհարիւրի կէսերուն ստացաւ այն կերպարանքը՝ որ հիմնականին մէջ անփոփոխ պիտի մնար մինչեւ 1899, երբ քառակուսի բեմին վրայ աւելցաւ բաղմանկիւնի կոնք մը՝ նորագոթական ոճով, որ քիչ մը խառնակեց եկեղեցին, ներմուծուեցան փայտեայ զարդաքանդակներ՝ պատուհաններու եւ պատկերներու վրայ, վանդակասիւներ, որմանկարներ, մեծադիր գունագեղ ապակիներ: Վերանորոգեալ եկեղեցին այսու կը կորսնցնէր իր եօթնհարիւրեան պարզութիւնը՝ զոր դրոշմած էր Մխիթար. իսկ 1955ի աշնանը ուրիշ բարդութիւն մըն ալ կու գար աւելնալ՝ գունագեղ խճանկարներու դեռեղումով, որոնք զարդարեցին կեդրոնական մասին որմերը, յիսնամեակ մը առաջ պատրաստուած որմանկարներու փոխարէն:

Հրդեհի վաղորդայնին, երբ մեր դիմաց երաւ եկեղեցիին վերանորոգումի հարցը, պատշաճագոյն լուծումը թուեցաւ մեզի՝ լոյսին բերել մէջտեղ երած գոթական նորայայտ տարրերը, ի յարգանս Մխիթարակերտ յուշարձանին: Ամբողջական վերածումը իր գոթական սկզբնավիճակին, նոյնիսկ անվիճելիօրէն պահելով կողմնակի եօթնհարիւրեան խորաններուն կառուցուածքները[18], մերժելի վար-

17. Մխիթար Արբահայր «ծայրէն շինած է աւագ խորանը՝ մարմար քարէ» (տե՛ս Յաւելուած Ա.) 1721ին, եւ հոգացած է միւս չորս խորաններու շինուածքը՝ պարզունակ ձեւով ու նախանիւթերով: Ասոնք, Մխիթարի ողջութեան իսկ վերաշինուած, հետեւեալներն են. ա) Խորան Աստուածամօր (1735), ձախ թեւին վրայ (պատկերը՝ Francesco Maggiotto նկարիչէն՝ կը ներկայացնէ Աստուածամօր ծնունդը). բ) Խորան Ս. Անտոն անապատականի (1736), աջ թեւին վրայ (պատկերը՝ Francesco Zugno նկարիչէն՝ կը ներկայացնէ Ս. Անտոն Արբան. սուրբին դիմագիծը կը նմանի Մխիթար Արբահօր). գ) Խորան Ս. Խաչի (1737), ձախակողմեան ծայրամատրիկին մէջ (մարմարեայ խաչեալով). դ) Խորան Ս. Գրիգոր Լուսաւորչի (1737), աջակողմեան ծայրամատրիկին մէջ (այժմեան պատկերին տեղ՝ կար Fr. Zugnoինը, այժմ վանքի պատկերասրահին մէջ փոխադրուած, տե՛ս Ծանօթ. թ. 30): 1738ին շինուած է, վանքի առաջին յարկին մէջ ուրիշ մատուռ մըն ալ, նուիրուած Ս. Բենեդիկտոսի, խորանով եւ իր յատուկ պատկերով, զոր գծած է հայ նկարիչ մը՝ Յովհաննէս Էմիրեան (1741): Ծունիոյի պատկերը, որ հրդեհէն վնասուած էր, վերանորոգուեցաւ G. B. Tiozzo մասնագէտին աշխատանքով. նմանապէս վերանորոգուեցաւ Ս. Անտոն անապատականի խորանը, որուն գագաթի արձանները (հրեշտակներ) ծանրապէս վնասուած էին:

18. Վերջերս, խորաններու մաքրագործում մը տեղի ունեցած է Մուրանոյի San Donato եկեղեցիին, ուր երկու տարի առաջ՝ Յուշարձաններու Վերահսկիչ Մարմինը վերցնել տուաւ երկու հսկայական «պարոք» խորաններ, դուրս ցայտեցնելու համար քանի մը քառակուսի մեդր խճանկարեալ յատակ մը՝ ԺԲ.

կած մըն էր, որովհետեւ շինուածքը՝ այնպիսի վերանորոգում ստացած էր Մխիթար Արբահօր օրով, որ գեղագիտական ու պատմական պահանջներ կը պարտաւորէին մեզ պահպանել զայն: Զմոռնանք ըսել որ այսպիսի աշխատանք մը, անտարակոյս, պիտի բախէր թէ՛ գործնական եւ թէ տեսական արգելքներու, քանի որ սկզբնական ծածքերն ու առաստաղները ամբողջովին քանդուած էին 1721–22ի շրջանին: Նկատմամբ նոր-գոթական վերաբարդումներուն, տրամաբանական լուծում մը պիտի ըլլար գանոնք սահմանափակել հիմնապէս աւագ խորանի բեմին վրայ, որ ընդարձակուած ու զարդարուած էր ոչ անարժէք որմանկարներով եւ գունագեղ նկարազարդ ապակիներով:

Ինչ որ Ս. Ղազարի եկեղեցիին այժմեան վերանորոգումը կը բնորոշէ, այն է որ ձեռնարկը չունեցաւ հիմնականօրէն ծրագրեալ ընթացք, եւ աշխատանքներու միջոց՝ մեծ կարեւորութիւն տրուեցաւ գործնական ու պատահական տուեալներու, վստահելով՝ գործնական մէջ՝ հոն աշխատող շինարարական վարպետ խմբակին փորձառութեան: Աշխատանքներու այս կցկտուր նկարագիրը ընդունելով հանդերձ, յարմար է որ մի առ մի քննենք շինուածքին զանազան մասերը:

ԱՐՏԱՔԻՆԸ.— Հրդեհը ոչ մէկ կերպով վնասած է արտաքին կողմնակի զարդերուն: Վերահասու եղանք որ եփեալ հողով յօրինուած դուրսի ստորեւ զետեղուած, ամբողջովին նախնական տարրն է գոթական շինուածքին, որուն արտաքին պատերը կարմրագոյն կիրով ծածկուած էին՝ Մխիթար Արբայի կատարած նորոգութիւններու շրջանին:

ԳԱԼԻԹ.— Այս վայրը, ուր կը պահուի Կոստանդին Ծուկկոլոյի երեքհարիւրեան չքեղ դամբանը[19], շատ աւելի գեղեցկացաւ՝ ընորհիւ

դարէն, եւ միջնադարու քանի մը աննշան որմանկարներ. շատ խեղճ արդիւնք մը: Խորաններու քակուած մասերը այժմ կը մնան բացօթեայ, ընդունուած չըլլալով իմ առաջարկս (որուն հաւան էր նաեւ Առաջնորդարանը) զանոնք վերակառուցանելու Վենետիկի San Girolamo եկեղեցիին մէջ – որ այժմ տխուր կերպարանք մը ունի՝ բոլորովին մերկ – ուրիշ երկու խորաններու հետ, որոնք կու գային Վենետիկի մէկ ուրիշ եկեղեցիէ մը, S. Maria Maggiore.

19. Ծուկկոլոյի դամբանին մասին, որու թուականն է 1354, տե՛ս W. WOLTERS, **La scultura veneziana gotica** (1300-1460), Վենետիկ 1976, I. էջ 84, n. 64, II. պատկ. 262–263. Հեղինակը դամբանը կը վերագրէ Վենետիկցի արձանագործի մը, որ ազդուած է Filippo Calendarioի ոճէն, իրաւացիօրէն ընդգծելով «որակի վիհը» որ գոյութիւն ունի ընդմէջ իւրաքանչիւր արձանի, «որոնց վրայ աշխատած են գոնէ երեք արձանագործներ: Աստուածածինը գլխաւորին է. երկու սրբուհիները՝ աշխատակիցի մը. երկու հրեշտակները, եպիսկոպոսը եւ

© National Library of Armenia

սպիտակ կճածեվին, գտնելով նախնական իր վիճակը։ Որմերուն վրայ ագուցուեցան ԺԸ. եւ ԺԹ. դարու դերեզմանաքարեր (1728–1804 թուականներէն), հայերէն արձանագրութիւններով, որոնք նախապէս զետեղուած էին եկեղեցիին ճախակողմեան սենեակի մը մէջ (փոքր աւանդատուն), եւ շատ փճացած էին խոնաւութենէն եւ աղէն[20]։

ՆԵՐՔՆԱՃԱԿԱՏ.— Հոս ալ, ինչպէս կողմնակի թեւերուն վրայէն, վար առնուեցաւ դորշագոյն ծեփը, նոր-գոթական կառուցուածքին ժամանակակից, եւ փոխարէն տրուեցաւ աղիւսգոյն կամ բաց վարդագոյն կճածեվի մը, մինչ եօթնհարիւրեանը անտարակոյս սպիտակ էր։ Կողմնակի թեւերու ճակատին՝ վերաբացուեցան զոյգ կլոր պատուհանիկներ[21], Իտալիայի քարով շրջանակուած, որոնք մասամբ ծածկուած էին առաստաղին մէջ։

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՆԱԽ.— Վերանորոգումի հարկաւոր աշխատանքներու պակասը՝ եկեղեցիին այս մասին մէջ, որ գործնականօրէն անվնաս մնաց հրդեհէն, թերեւս կազմէ կորսուած լաւ առիթ մը։ Արդարեւ, անաղարտ թողուեցաւ որմերու խճանկար զգեստաւորումը եւ աստղազարդ երկինքը՝ կամարաձեւ զագաթին վրայ ներկուած,

սուրբը՝ անճարակ օգնականի մը»։ Wolters սուրբերէն ոչ մէկը կը բնորոշէ, որքան որ յայտնի նշաններ կան զանոնք որոշելու։ Զախակողմեան մարտիրոսուհին որ ձեռքին ունի «Գառն Աստուծոյ» (Agnus Dei), անտարակոյս՝ Ս. Ագնէսն է. մինչ աջակողմեանը, բաժակով, շատ հաւանականօրէն՝ Սրբուհի Լուչիան է։ Գիրք բռնող սուրբը հաւանօրէն առաքեալ մըն է, իսկ եպիսկոպոսական զգեստներովը՝ կամ Մեծն Լեւոնն է, նախնական պաշտպանը «ըստ օրինաց» եկեղեցիին, կամ Ս. Ղազարը, որ եղաւ «գործնականօրէն»։ Նկարելի է որ Ս. Ղազար ներկայացուած է թէ՛ իբր բորոտ, թէ՛ իբր եպիսկոպոս. զանազանութիւնը ընդ մէջ աւետարանական ագահ-հարուստի առակի բորոտին եւ Մարթայի ու Մարիամի քրոջ Ղազարին, թէեւ ոչ այնքան իրերահաշտ, բայց առիթ տուած է պատկերագրական չփոթութեանց (L. REAU, **Iconographie de l'art chrétien,** III. Փարիզ 1958, էջ 794)։

20. Այս շիրմաքարերը սկզբնաբար եկեղեցիին մէջ էին, եւ երբ ԺԹ. դարուն ասոր յատակը վերանորոգուեցաւ, փոխադրուեցան փոքր աւանդատուն։ Գաւիթին մէջ են նաեւ այն չորս մարմարեայ սիւները, որոնք երբեմն աւագ խորանին վրայ էին, 1816ին զետեղուած եւ 1899ին վար հանուած, երբ խորանը տեղափոխուեցաւ դէպի ետ։ Հոս զետեղուած է նաեւ բազմահարուստ-բարերար Ագեքսանդր Ռափայէլի մարմարեայ շիրիմը, նոր դասական արուեստով. ինք ծոլի վրայ մեռած ըլլալով, կարելի չէ եղած հոս փոխադրել մարմինը. այժմ նոյն շիրմին մէջ կը հանդչի Միսրանութեան բարերար Պետրոս Հայրապետ Կրէտ († 1940)։ Առաստաղի որմանկարներուն հեղինակն է Noè Bordignon, 1900ի սկիզբներէն (վանքի պաշտպան Աստուածամայրը եւ երկու դրուագներ Մխիթարի կեանքէն, Սեւանի տեսիլը եւ երկու կուսաններու երազը)։

21. Այս պատուհաններէն մտնող ճառագայթները չափազանց ուժեղ ըլլալուն, հարկ է դեղնորակ ապակիներով նուազեցնել լոյսը։

որոնք մաքրուեցան թանձր մուրէն։ Նոր ու պարզունակ զարդանկարներու այս ներկայութիւնը կը խանգարէ բոլոր ներքին գեղագիտական հաւասարակշռութիւնը, այնու որ ասոնք այժմ աւելի ցայտուն կերպարանք առած են, քանի որ, ինչպէս ըսինք, կողմնակի թեւերու որմերուն եւ ներքնաճակատին տրուած է վարդագոյն կճածեվի մը։ Նկատելի է հուսկ՝ որ խճանկարները ագուցուած են 1955ին, աւելի դրդնական՝ քան գեղարուեստական նպատակներով, այն է՝ խուսափելու համար ընդմիշտ ծեփերու յաճախակի քայքայումէն, եւ այդ առիթով ծածկած են՝ գծագրութիւններուն ընդօրինակումով՝ վեց դիմանկարներ հայկական սուրբերու, պատրաստուած Էրմոլաոյ Պաոլետտի նկարիչէն (1899)։ Իմաստուն վերանորոգումը պէտք էր որ վերարտադրէր կճածեվը, պահելով շատ շատ լոկ խճանկար բոլորակները, նկատած անոնց բարեպաշտական եւ պատկերագրական ստոյգ առաւելութիւնները։ Եթէ այս ուղղութեամբ տարուած ըլլար աշխատանքը, նաեւ լրիւ արժէքաւորուած կ'ըլլային Վերոնայի կարաշխատանքը, մանաւանդ կ'ըլլային Վենետիկի Սան Մարմարով շինուած այն վեց խրոխտ սիւները, որոնք կը բաժնեն եկեղեցիին երեք նաւերը։ Այս սիւները շատ նման են անոնց՝ որոնց կը հանդիպինք Վենետ-բիւզանդական կառոյցներու մէջ (նկատել անկիւնատաշ սիւնագլուխները)[22], որոնք թերեւս կը պատկանէին Մեծն Ս. Լեւոնի նուիրուած նախկին եկեղեցիին, որ շինուած է 1182ի։ Մեծն Ս. Լեւոնի նուիրուած նախկին եկեղեցիին, որ շինուած է 1182ի աւերները, երբ հոս փոխադրեցին բորոտանոցը, Վենետիկի Սան Տրովազոյի ժողովրդապետութենէն[23]։ Այսպէս կը գրէ Մխիթար Աբրահայը, իր նամակներէն մէկուն մէջ, Պոլիս գրկուած 1722ի Դեկտ. 22ին. «մարմարեայ սիւներն ու իրենց խարիսխները, որոնք չնչին բաներ կը թուէին, յղկուեցան ու փայլ ստացան, եւ այնքան գեղեցկացան՝ որ նոր շինուած կը կարծուին»[24]։

ԿՈՂՄՆԱԿԻ ՆԱԽԵՐ.— Գործնականին մէջ, հրդեհէն ետք տեղի ունեցած բոլոր հնախօսական դիւտերը՝ եկեղեցիին այս երկու թեւերուն մէջ իրագործուեցան։ Գոթական շինուածքին կը պատկանին հարաւ, աջ թեւին մէջ լոյսին եկած յայտնութիւններ են, որոնք իրենց համապատասխաններն ունեցան դիմացի թեւին մէջ ալ։

Ամէնէն առաջ, հրդեհին հետեւանքով թափած ծեփերուն տակէն, մեծ աւանդատան կից պատին վրայ տեսնուեցաւ թրծուած աղիւսէ եւ զարդաքանդակներով յօրինուած կիսակամար մը, մասամբ ծածկուած

22. E. ARSLAN, **Venezia gotica,** Միլան 1970, էջ 14։
23. G. CAPPELLETTI, **Storia** ... յիշ. գ. էջ 4։
24. Ցաւելուած Գ. Սիւներու խարիսխները բոլորովին նոր շինուած են՝ երբ նորոգուած է յատակը, 1800ի շրջանին։

© National Library of Armenia

կուած Ս. Անտոն անապատականի խորանէն։ Յաջորդաբար, ճիշտ ասոր հանդիպակաց պատին վրայ ալ, նման աղեղ մը յայտնուեցաւ, սակայն տարբեր զարդաքանդակներով։ Ասոնց արտաքին կողմերէն զոյգ աւանդատուններուն մէջ ալ երեսան բերուեցան համապատասխան աղիւսաշէն սրածայր կամարներ, եւ անոնց շուրջ հիմերու հետքեր։ Կարելի է հետեւցնել թէ այս կամարները կ՚առաջնորդէին դէպի կողմնակի մատրիկներ, թերեւս ուշ ատեն աւելցուած, իբր եկեղեցիին երկու բացուած թեւեր[25]։

Որմնադիրի մը արթնամտութեան շնորհիւ, աշխատանքներու ընթացքին երեւան եկան ուրիշ հետաքրքրական տարբեր ալ, որոնց գոյութեան մասին եւ ոչ իսկ կը մտածուէր։ Չորս բացուածքներ են (133×185 հրդմ. մեծութեամբ), իւրաքանչիւր կողմէն երկու հատ, շրջապատի սկզբնաւորութեան եւ մէջտեղները, այժմեան յատակէն 60 հրդմ. բարձրութեան վրայ, հորիզոնական ուղղանկիւնի ձեւով, ցած կամարով մը աւարտող։ Արտաքին շրջանակը աղիւսէ է, սկզբնաբար՝ կարմրաներկ, մինչ ներքին շրջանակը՝ խտրեան քարով է յօրինուած, ուր յայտնի կը նշմարուին երկաթեայ ճաղերուն ծակերը։ Ամէնէն հաւանական ենթադրութիւնը որ կրնայ արդարացնել այս տարօրինակ չորս բացուածքներուն գոյութիւնը, որոնց նմանը չկայ Վենետիկի գոթական եկեղեցիներուն մէջ, այն է որ այդ ծակերէն հնարաւոր կը դառնար բորոտներուն՝ ներկայ գտնուիլ կրօնական արարողութիւններուն, առանց եկեղեցի մտնելու։ Եւ քանի որ ո՛չ Կորոնելլի, ոչ ալ Մխիթար Աբրահայր որեւէ ակնարկ չեն ըներ եկեղեցիին յարակից շէնքերուն (ինչպէս կողմնակի մատրիկներուն), կարելի է եզրակացնել որ ատոնք փակուած ըլլան 1400–1691ի ընթացքին[26], երբ Ս. Ղազար աստիճանաբար դադրեցաւ իբր բորոտանոց գործածուելէ, դառնալու համար աղքատ հիւանդներու անկեալանոց, յետոյ իր բոլոր կահ-կարասիներով փոխադրուած Մուրացիկներու Ս. Ղազար կոչուած վայրը (San Lazzaro dei Mendicanti), Ս. Մարկոսի Մեծ Դպրոցին քովերը. կամ փակուած ըլլան թերեւս 1601–1717ի ժամանակաշրջանին, երբ Ս. Ղազար՝ Հայոց յանձնուելէ

25. Յայտնուած հիմերը տեղ մը զուգահեռ կ՚ընթանան եկեղեցիին շրջապատին, շուրջ 5 մեդր հեռաւորութենէն, եւ յաջորդաբար, դէպի հիւսիս-արեւելք դառնալով՝ ուղղանկիւն մը կը կազմեն անոնց հետ։

26. Այս շրջանին, հիմնական նորոգութիւններ կատարուած են Հիւանդանոցին մէջ, ինչպէս կը վկայէ մուտքի բարաւորը (որ յետոյ վանքինն է եղած), որու գլխագերանին վրայ կը կարդացուի MCCCCLXXXXVIII (1498) թուականը, ու կը ներկայացնէ հիւանդանոցին երեք պետերուն տոհմանշանները. Giovanni Pisani, Zaccaria Bembo եւ Pietro Vitturi։ Միւնոյն թուականը, սակայն արաբական թուանշաններով, արձանագրուած է սիւնի մը վրայ, որ քանի մը տարի առաջ երեւան եկած է վանքի մուտքի սպասասենեակին մէջ (1967ի շրջանին, ջրհեղեղէն ետք կատարուած նորոգութեանց օրերուն)։

առաջ՝ բոլորովին լքուած կղզի մը դարձած էր, անտեսելով Դոմինիկեաններու մէկ հակիրճ ներկայութիւնը՝ 1669ին։

Պատահական եղաւ նաեւ յայտնութիւնը չորս քանդակազարդ ոլորուն զերաններուն, որոնք պարանի նման՝ թեւերու երկայնքին էին զետեղուած, ատամնաղարդ եզերումներով, եւ սկզբնաբար՝ առաստաղի զերաններու ծայրամասերուն իբրեւ յենարան։ Ասոնք Մխիթար Աբրահօր կատարած նորոգութեան ժամանակ գործածուած էին իբր զերան՝ զօրացնելու համար որմերը, եւ պատին մէջ ազուցուած էին իրենց հակառակ կողմէն, զարդերը դէպի ներքսակողմ։ Այս ելրիզազերաններու թերի կտորները նմանողաբար չինուեցան՝ թեւերու տափակ առաստաղի երկայնքին, որուն արտաքին կողմէն կ՚արձագանգէ աղիւսակերտ ժանեակը։

ՃԱԿԱՏԻ ՄԱՏՐԻԿՆԵՐ.— Բացի Մարգարիտա Թագուհիի մեծ ու շքեղ վարագոյրի կորուստէն[27], ինչպէս նաեւ Պաոլետտիի զոյգ որմանկարներու թխացումէն[28], ոչ մէկ այլ նկատելի վնաս կը նշմարուի բեմին վրայ, որու գաղաթին՝ կամարներու խաչաձեւ դիրկընդխառնումին – գժբախտաբար նոր խճանկարներու ներկայութենէն այլափոխուած – կը մնայ գրեթէ մոռցուած, եկեղեցիին հետ միատեղ յօրինուած միակ յուշարձանը, Երկնաւոր Հօր ուժեղ դիմաքանդակ մը, որ մինակը արդէն բաւարար է հաստատելու եկեղեցիին շինութեան թուականը՝ զոր մենք դրինք 1300ի կէսերուն[29]։ Զախակողնութեան թուականը՝ զոր մենք դրինք 1300ի կէսերուն[29]։ Զախակողմեան մատրիկին մէջ, որ նուիրուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի, ցանկալի է վերստին զետեղել Ծունիոյի եռանկարը, որ այժմ խնամքով կը պահուի վանքի պատկերասրահին մէջ. անոնցմէ մէկը խորանի նկարն է, միւս երկուքը՝ կողմնակի զետեղուելիք[30]։

ԱՒԱՆԴԱՏՈՒՆ.— Հոսկէ սկիզբ առած է հրդեհը, ամբողջովին քանդելով զայն[31]։ Շինուած էր Մխիթար Աբրահօր կողմէ, իսկ խոքանդելով զայն[31]։ Շինուած էր Մխիթար Աբրահօր կողմէ, իսկ խո-

27. Նախկինին փոխարէն, կարմիր թաւիշէ նոր վարագոյր մը նուիրած է վերջերս Իտալիոյ նախկին թագաւորը՝ Umberto di Savoia.

28. Երկու մեծ իւղանկար լուսնեակները, որոնք կը ներկայացնեն Ս. Պետրոս ու Ս. Պօղոս առաքեալները՝ հրեշտակներու մէջ, վերանորոգուեցան Valerio Vio նկարչին աշխատանքով։

29. Տե՛ս WOLTERS, **La scultura** ... յԻշ. գ.։

30. Ներկայ պատկերը գծած է Noè Bordignon։ Իսկ Zugnoի երեք պատկերները (1737–40), վանքի պատկերասրահը փոխադրուած են, եկեղեցիին խոնաւութեան պատճառով։ Այժմ, սակայն, եկեղեցիին մանրակլիման փոխուած է, պատերուն հիմնական նորոգութեամբ, ինչպէս նաեւ ջեռուցումի նոր սարքաւորումով։

31. Յատակի վերանորոգման ընթացքին ի յայտ եկաւ անկիւնաւոր բեկոր մը շրջանակի, Վերոնայի վարդագոյն մարմարով, տերեւազարդերով։ Աւանդատան մէջ զետեղուեցան այն որմատախտակները՝ որոնք ժամանակին եկեղեցիին մէջ էին, ատեանի պատերուն վրայ։

© National Library of Armenia

բանը 1816 *թուականէն էր*[32], *որմէ հաղիւ քանի մը բեկոր մնացած է, վերակառուցման ընթացքի մէջ է։ Այստեղ այրած են ամբողջապէս ինը նկարներ, որոնցմէ երկուքը՝ գեղեցիկ բնանկարներ, սրբազան բովանդակութեամբ, Գասպարի որդի՝ Անտոնիոյ Դիծիանիի վրձինէն էին*[33]։ *Միւս երկուքը Յովհաննէս հայ պատկերահանի մը գործերն էին, Մխիթար Աբրահօր շրջանէն. Սուրբ Յովսէփի խորանին նկարը՝ Աստուածահայրը իր գրկին ունենալով Յիսուս Մանուկը, եւ Աստուածամօր նկար մը՝ ընդօրինակութիւն* Sassoferratoի *մէկ գործէն։*

Կը փակեմ համադրական այս տեղեկագրութիւնս, մաղթելով որ հրդեհէն քանդուած ու այրած բաժիններու վերանորոգումը մտնէ կղզիին վերակառուցումի ընդհանուր ծրագրին մէջ, յարգելով վանական համալիրին ուրոյն յատկանիշները եւ լճակին գեղատեսիլ նըկարագիրը[34]։

32· Հ· Յ· ԹՈՐՈՍԵԱՆ, Վարք··· յիշ· գ· էջ 288։

33· *Կը ներկայացնէին Քրիստոսի մկրտութիւնը եւ Ղազարու յարութիւնը* (52,5×134 *հրդմ· մեծութեամբ*), *որոնք ժամանակին՝ վանքի մուտքի հիւրասենեակին մէջ կը պահուէին* (*տե՛ս* A. P. ZUGNI – TAURO, **Gaspare Diziani**, *Վենետիկ* 1971, *էջ* 118–119, *պատկ·* 311–312)։

34· *Տեղագրական հարազատ արժէքներու խեղաթիւրում մը կը ներկայացնէ կղզիին դիմաց՝ Լիտոյի մէջ վերջերս կառուցուած հսկայ համալիր մը, որուն ծաւալը բաւականաչափ կը խանգարէ կղզիին տեսարանը։*

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՒԵՐԱԳԻՐՆԵՐ

Ա·

«Յամին վրկութեան մերոյ հազարերորդի եօթնհարիւրերորդի քսանեւմիերորդի, յամսեանն Մայիսի, սկիզբն եղեւ շինութեան եկեղեցւոյն։ Եւ Աբրայ Հայրն մեր՝ որ ճարտարապետ կանոնադիր ձեւոյ եւ չափու շինուածոյն էր, հրաման ետ նախ զորմունս նորա գրկով չափ յաւելուլ քան զառաջինն ի բարձրութիւն։ Եւ այնպէս յաւելին զբարձրութիւն նոցա չուրջ չուրջանակի։ Իբր զի ընդ գերանօք ցուցցն հարթ կառուսցի յարկն երկուց կողմանց ի վայելչութիւն. եւ այնպէս եղեւ։ Զի ի վերայ միջոյ երկայնութեան եկեղեցւոյն յարկ համարակալ կառուցաւ. եւ ի վերայ երկուց կողմանց նորա առ որմովք հարթ առաստաղ։ Իսկ ի սնարից կողման՝ ուր աւագ բեմն էր, կմրէթայարկ ծածկոյթ կայր ի վերայ։



Ընդհ· տեսարան, զանգակատունն ու լուսանկարուած, իրակէզ շէնքերուն· եկեղեցիին աջ թեւը, մեծ ատամնախնկի ձեռագրատունը եւ 1700ական գրադարանը։

Veduta complessiva, dal campanile, dell'area incendiata: navata destra, sagrestia con sovrastante ambiente ottocentesco («rotonda») e parte della biblioteca settecentesca.

© National Library of Armenia

ՖՐԱՆՉԵՍԿՈՅ ԶՈՒՆԻՈՅ։ Հայ եկեղեցւոյ Վարդապետները, ամբողջապէս կորսուած որմանկար, 8–9 Դեկտ. 1975ի գիշերուան հրդեհէն. կը զարդարէր մեծ գրադարանին առաստաղը։

FRANCESCO ZUGNO: I Dottori della Chiesa Armena. Affresco già nella sala della biblioteca, distrutto nell'incendio della notte tra l'8 e il 9 dicembre 1975.

Երկնաւոր Հօր գլխաքանդակը, ԺԴ. դարու կէսէն, գետեղուած՝ Ս. Ղազարի եկեղեցիին աւագ բեմի սիւնակամարներու զագաթին։

Chiesa di S. Lazzaro. Busto di Padre Eterno (metà del XIV sec.), chiave di volta nella crociera del presbiterio.

Ժանեկաձեւ փայտեայ գերան, ատամնաձեւ եզերազարդերով, Ս. Ղազարի եկեղեցիին վերանորոգման աշխատանքներու ժամանակ յայտնաբերուած։

Chiesa di S. Lazzaro. Particolare di un cordone ligneo con bordo dentellato, ricuperato durante i lavori di restauro.

© National Library of Armenia

Գոթական կամար (աւանդատունէն տեսնուած), Ս. Ղազարի եկեղեցիին վերանորոգման աշխատանքներու ժամանակ յայտնաբերուած:

Chiesa di S. Lazzaro. Arco gotico (prospetto verso la sagrestia), messo in luce durante i restauri.



Նոյնին արտաքին մասը, եկեղեցիէն տեսնուած, թրծեալ ադիւսէ շինուած զարդաքանդակներով:

Chiesa di S. Lazzaro. Estradosso del medesimo arco (prospetto verso la navata destra) con motivo decorativo in terracotta.

© National Library of Armenia

Ս· Ղազարի ներքնաբառանկիւնին մէջ, Իստրիայի քարէ կոփուած գլխագերան (ԺԴ· դար), սկզբնաբար, հաւանօրէն, գործածուած իբր եկեղեցւոյ մուտքի դրան քարաւոր:

Chiostro del convento. Architrave in pietra d'Istria (XIV sec.) già probabilmente in origine sulla porta d'ingresso della chiesa.



Ս· Ղազարի եկեղեցիին վերանորոգման աշխատանքներու ժամանակ յայտնաբերուած չորս պատուհանիկներէն մէկը, զոր ձեւ շինուածքի շրջանէն:

Chiesa di S. Lazzaro. Una delle quattro aperture, appartenenti alla chiesa gotica, emerse nelle navate laterali.

© National Library of Armenia



ՖՐԱՆՉԵՍԿՈՅ ԾՈՒՆԻՈՅ։ Սրբուհի Կատարինէի դատավարութիւնը, որմանկար՝ որ կը զարդարէր մեծ գրադարանի առաստաղին կեդրոնական մասը, 1976–77ի վերանորոգումէն ետք (ստորին մասը կորսուած է)։

FRANCESCO ZUGNO: Giudizio di S. Caterina, comparto centrale del soffitto della sala della biblioteca, dopo il restauro eseguito nel 1976-77 (la zona inferiore è perduta).

Եւ արար զվեց մեծամեծ լուսամուտս եկեղեցւոյն։ Երեք ի հիւսիսոյ եւ երեք ի հարաւոյ կողմանէ. որոց ամենեքեան վիմակուռ սեմօք չուրջանակի նոր կառուցան։

Եւ զաւանդատուն եկեղեցւոյն անդստին ի հիմանց նոր կառոյց. զոր օրինակ եւ զսեղանն աւագ բեմին ի սրբատաշ քարանց գունագոյն մարմարոնազարդ նորոգ շինեալ կանգնեաց։ Եւ յետ կոյս աւագ բեմին (ըստ սովորութեան տեղւոյն) դասն յընդուզի վայտից ատաղձագործ յօրինուածով կազմեալ կառուցաւ։

Զչորս խորանս, երկու յաջմէ եւ երկու յահեկէ աւագ բեմին յաւել։ Զմին՝ յանուն խաչելութեան Տեառն, ուր յետոյ ի տեղի նկարագիր պատկերի՝ մարմարոնեայ խաչ մեծ եւ խաչելութիւն ի վերայ ի նմին նիւթոյ կազմեցաւ։ Զերկրորդն՝ Մննդեան Երանուհւոյ Աստուածածնին։ Զերրորդն՝ Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին։ Եւ զչորրորդն՝ Սրբոյ Հօրս մերոյ Անտոնի անապատականին։ Այլ եւ զսեղան մի փոքրիկ, յանուն Աստուածահօրն Յովսեփայ, ի ներքս անդր աւանդատանն՝ ի մի կողմն կառոյց. եւ այնպէս բոլանդակն եղեւ վեց սեղան։

Վեց սիւնք էին եկեղեցւոյն կճեայք, աղնիւք, այլ ի հնութենէ ժամանակաց խրթնացեալք, իբրեւ յապազնիւ քարանց ձոյլք երեւէին։ Ծախեաց ինչ եւ վասն նոցա, եւ սրբեալ փայլեցուցին զնոսա, եւ պայծառացեալ վայելչացան։

Որմունքն ամենայն ի ներքուստ կուսէ մաքուր բռով՝ ի կրոյ խառն մարմարոն փոչեաց սպիտակավայլ բռեցան։ Իսկ արտաքուստ արտաքս որսախառն կրով կարմրերանգ բռեալ կազդուրեցան։

Իսկ արդ՝ այսչափ իրաց շինութեան ամենայն ծախից գումարն եղեւ 2·500 դահեկան»։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ ԿԱՐԳԻ ՄԻԱՆՁԱՆՑ ՀԱՑՈՑ Ի ԿԱՐԳԷ ՍՐԲՈՅՆ ԱՆՏՈՆԻ ԱԲԲԱՅԻ Ի ԳԵՐՑԱՐԳՈՅ ՄԽԻԹԱՐԱՅ՝ ԱՌԱՋՆՈՅ ԱԲԲԱՅԷ, Մասն Երրորդ, էջ 283–284 (1721, ամ 22րդ Միաբանութեան)։

Բ.

«Եւ գիտել պարտիս զի եկեղեցւոյ չէնքն կարի ծանր եղեւ, վասնզի բոլոր առաստաղք փտեալ գոլով, ի վայր ձգեցաք եւ հարկն բերաւ զի նաեւ երկու կողմանորմունքն բարձրանայցեն, որպէսզի ըստ օրինի եւ ըստ կարգի լինիցի ծածքն եւ ապա թաւանն. միջինն՝ կամար, եւ երկու կողմունքն՝ տափարակ, ոչ տախտակով, այլ քանթինելայով, որոյ վերայ լինի ծեփ մառմօռինով։ Եւ այսու երեւի իբր քարեայ կամարով կառուցեալ։ Նմանապէս որմունքն մառմօռինով ծեփին։

Եւ չորս մեծ պատուհանք ի յորմունսն։ Միայն չորս պատուհանքն երկու հարիւր դուռուչէն աւելի նստին։ Ըստ այսմ իմա՛ եւ զայլոց։

Իսկ Աւագ Խորանն որ յառաջ դայ եւ մառմառեայ քարով չինի, յետ կոյս նորա լինի զօռօն (= դաս), հնգետասան նստարանով ընկղենեաւ. եւ աղօթարանք՝ առաջի նստարանացն ընկղենեայ, ըստ օրինի այլոց եկեղեցեաց չինեցեալ։

Իսկ աւանդատունն եւս ըստ այսմ համեմատութեան աղնուարար եղեւ չինեցեալ։

Նաեւ երեք աչքեայ զանգակատուն ի վերայ որմոյն՝ որ հայի դէպ ի հիւսիս։ Ըստ այնմ ձեւոյ՝ զոր ունէաք ի Մօտօն. բայց սա առաւել մեծագոյն եւ գեղեցիկ քան զնա։

Շինելիք եւս են երկու խորանք յաջմէ եւ յահեկէ աւագ խորանի. եւ միւս եւս խորան հանդէպ Աստուածածնայ խորանին»։

Նամականի Մխ. Աբրահօր, հտ. Ա. Նամակ թիւ 147, էջ 273–274 (*Նամակ Մխ. Աբրահօր, Վենետիկէն, առ Հ. Պօղոս, կ. Պոլիս, 1722 Օգոստոս 30*)։

© National Library of Armenia

Գ.

«Զեկեղեցին մեր երջանկապէս աւարտեալ եղերեցաք. կարի յոյժ գեղեցիկ եւ ազնիւ եղեւ, եւ գովելի ամենից տեսողաց։ Հազիւ եղերեցաւ ի վերջ Հոկտեմբերին, եւ Նոյեմբերի ինն արարաք զհանդիսութիւնն, եւ մատուցաք զառաջին պատարագն ի վերայ աւագ սեղանոյն։

Մարմարեայ սիւնքն եւ խարխսխք նոցին, որք որպէս ոչինչք երեւէին, այժմ բանեցուցեալ փայլեցուցան, եւ այնքան գեղեցկացան եւ ողորկ եղեն, մինչ զի փայլակ նոցին տայ վարկել տեսողացն՝ թէ նորապէս չինեալ եւ եղեալք իցեմք։

Եւ բոլոր եկեղեցին այնպէս եղեւ, իբրեւ թէ բոլոր որմունքն եւ առաստաղն եւ կամարն քարեայ իցեն. քանզի ընդ երգելն մեր այնպէս հնչէ, որպէս թէ կտոր փայտի ոչ իցէ ներ չինուածոյն։ ...

Եւ թէպէտ խարճ եւս շատ գնաց, բայց այնքանեաւն այսպիսի եկեղեցի ստանալ ոչ լինէր, եթէ ոչ Աստուած յաջողեալ էր»։

Նամականի Մխ. Աբբահօր, հտ. Ա. Նամակ թիւ 150, էջ 282 (*Նամակ Մխ. Աբբահօր, Վենետիկէն, առ Հ. Գօղոս, Ի. Գոլիս, 1722 Դեկտ. 10*)։

Դ.

«Զեկեղեցին մեր այս ամ սկսաք վերաշինել, եւ երջանկապէս աւարտեալ եղերեցաք. կարի յոյժ գեղեցիկ եւ ազնիւ եղեւ, եւ ամենից տեսողաց գովելի։ Սկսումն եղեւ ի Մայիսի ամսոյն, եւ եղերումն Նոյեմբերի ինն, յորում աւուր արարաք զհանդիսութիւն եւ մատուցաք զառաջին պատարագն։

Զաւագ խորանն յառաջ բերաք, եւ չինեցաւ մարմարեայ քարամբ, գոյնզգոյն. նմանապէս եւ երկու դուռն քարեայ՝ յաջմէ եւ յահեկէ սեղանոյն, եւ յետկոյս խորանին՝ գօռօ (= դաս) չինեցաւ ընկզենեաւ տախտակաւ, յենարան եւ նստարան եւ աղօթարան. ըստ որում են գօռօքն լաթինացւոց. եւ կարի յոյժ գեղեցիկ եղեւ նաեւ այս, եւ է ընդունակ քանեւհինգ անձանց, թէ՛ ի նստիլն եւ թէ՛ ի կանգնիլն։

Եւ յերկուս կողմանս Աւագ խորանին, ուր փոքրիկ զարէլի (= մատուռ) նման տեղիք գոյին, չինեցան երկու խորանք, մինն Յաչելութեան, եւ միւսն Լուսաւորչի։ Եւ հանդէպ Աստուածածնայ խորանի՝ չինեցաւ խորան Սրբոյ Հօրն մերոյ Անտոնի։

Եւ եւս չորս մեծագոյն եւ լաւ պատուհանք չինեցան նորապէս եւ ի մէջ եկեղեցւոյն։

Իսկ կամարքն որք կարմիր սորով ներկեալ էին, այժմ որպէս քարեայ չինեցեալ ձեւացան, եւ վեց սիւնք կամարաց. եւ խարխսխք նոցին, որք որպէս զանհարթ քարինք երեւէին, այժմ կարմրախառն եւ փայլուն մարմարք եղեն. եւ այնպէս փայլին, որպէս փայլին մեծածախ թիրանաց մարմարեայ սիւնքն. եւ այս ոչ ի ձեռն ներկեցման եւ գունոյ, այլ բնականք ինքեանք բնաւորեցեալ գունովն իւրեանց փայլին, քանզի հարթել եւ փայլեցուցանել տուաք. եւ որք տեսանեն՝ ոչ հաւատան թէ առաջին սիւնքն իցեն։

Բոլոր առաստաղն եւ ծածք եկեղեցւոյն նորապէս չինեցան, զի հինն փտեալ էր. եւ որք ի վեր հային՝ ոչ տեսանեն զփայտեղէնս, այլ բոլորն մառմօրին ծեփով ծեփեցեալ, այսինքն՝ ի մէջն կամար, եւ երկու կողմունք՝ հարթ. եւ այնպէս երեւի թէ քարամբ իցէ չինեալ օրոցք կամարն եւ երկու կողմի հարթ առաստաղքն։ Եւ աստուստ հետեւեցաւ զի եկեղեցին մեր այժմ այնպէս գոռայ, մինչ զի լսողքն համարին ի մէջ յայրի միոջ խօսիլն։

Եւ զի նաեւ զորմունս եկեղեցւոյն մարդաչափ մի բարձրացուցաք. զի կարելի լիցի չինել ըստ օրինի, եւ երկու կողմանց սուֆիթայք (= ձեղուն) հարթ հաւասար գայցեն։

Իսկ զաւանդատուն ի հիմանց նորապէս չինեցաք, փոքր ինչ շարժեալ ի հին տեղւոջէն, զի կարելի լիցին ըստ յարմարութեան չինիլ պատուհանք եկեղեցւոյն։ Նաեւ սա այնքան դեղեցիկ եւ ազնիւ եղեւ, մինչ զի լիապէս պատապխանէ ազնուութեան եկեղեցւոյն մերոյ. եւ զայս զոր սակաւուք գրեցի, ի տեսանելն քո ըստ որում է իսկապէս իմանաս։

Եւ թէպէտ ծախ եւս գնաց, բայց առ այնքան ազնուութիւնն կրկնապատիկ ծախն եւս սակաւ համարի ի տեսողաց, որպէս որքան՝ թէ՛ մեծամեծք եւ թէ՛ փոքունք մինչ տեսանեն, զարմանան. եւ համարին յոյժ առաւել քան զկրկնապատիկն ծախս գնացեալ։

Եւ ծանի՛ր զի Տէր յաջողեաց մեզ յայտմիկ՝ զի այսպէս եղեւ. ապա թէ ոչ՝ ի մեզ կարողութիւն ինչ ոչ գոյր այսպիսարար եղերել։

Թողում յիշել զչինումն զանգակատան. յոյժ մեծ ելաւ քան զայն որ ի Մօտն. եւ զծեփումն բոլոր որմոցն մառմօրինեայ ծեփով, եւ զչինումն յատակի եկեղեցւոյն եւ աւանդատանն, եւ այլոց նմանեաց։

Եւ եւս յԱստուածածնայ խորանէն մինչեւ Աւագ խորանն մի աստիճան բարձրացուցաք յատակ եկեղեցւոյն. եւ չուրջ զնովաւ եղեալ երեսք որմոցն՝ ընկզենեայ տախտակաւ աւելի քան զմի մարդաչափ շրջապատեցեալ եղեւ հանդերձ նստարանաւ. որպէսզի երբ կարգաւորք չուրջ զԱւագ խորանաւն պար առեալ զհանդիսութիւն ինչ արարացեն, ունիցին զյենարան եւ զնստարան, որպէս եւ է իսկ սովորութիւն եկեղեցեաց տեղւոյն»։

Նամականի Մխիթար Աբբահօր, հտ. Ա. Նամակ թիւ 154, էջ 293–294 (*Նամակ Մխ. Աբբահօր, Վենետիկէն, առ Հ. Գաբրիէլ, Երզրում, 1723 Յունուար 10*)։

RIASSUNTO

IL RESTAURO DELLA CHIESA DI S. LAZZARO DEGLI ARMENI

(Alberto Rizzi)

L'incendio sviluppatosi nella notte tra l'8 e il 9 dicembre 1975 a S. Lazzaro degli Armeni, pur recando al patrimonio culturale dell'isola ingentissimi danni di cui alcuni irreparabili — la perdita artistica più grave fu metà del soffitto affrescato da Francesco Zugno nella settecentesca sala della biblioteca — ha tuttavia causato la scoperta nella chiesa di vari elementi architettonici e decorativi. La chiesa gotica di S. Lazzaro, eretta nella metà del trecento, fu radicalmente restaurata dall'abate Mechitar, il sapiente fondatore della Congregazione armena che da lui prese il nome, detto nelle cronache conventuali «l'architetto e il disegnatore

© National Library of Armenia

della forma e delle misure della costruzione». Egli tra il 1721 e il 1722 la riformò mediante la sopraelevazione delle navate laterali di un metro circa, il rinnovamento delle coperture che furono fatte al centro a volta a botte e ai lati piane a cantinelle, l'apertura di nuove finestre centinate, il rialzo del pavimento di un gradino in corrispondenza delle colonne verso il presbiterio, la tinteggiatura a marmorino bianco di tutto l'interno. I vari interventi di restauro dopo l'incendio, seppure attuati in maniera episodica e non sempre coerente, hanno tuttavia il merito di aver liberato la chiesa da molti elementi neogotici che ne facevano quasi un «falso», migliorando in tal modo la lettura del testo trecentesco come di quello settecentesco. L'aspetto del «gavit» il nartece delle chiese armene, è molto migliorato grazie al ripristino di un intonaco a marmorino bianco conforme a quello originario, mentre in chiesa si è optato per un marmorino di color mattone chiaro. Rimasta inalterata la navata centrale, le novità riguardano soprattutto le navate laterali grazie alla scoperta di elementi della chiesa gotica. Questi consistono in due arcate originali in corrispondenza delle sagrestie vecchia e nuova (gli estradossi in cotto hanno motivi ornamentali diversi), in quattro travi a cordone a dentelli, già infisse nei muri, e in quattro aperture rettangolari ad arco ribassato, distribuite due per parte. Probabilmente queste strane aperture, già munite di inferriate, avevano lo scopo di permettere ai lebbrosi di assistere alle funzioni religiose senza entrare nella chiesa; il rinvenimento di fondazioni di due corpi di fabbrica adiacenti alle navate laterali viene in effetti a corroborare tali ipotesi. Lavori di restauro sono ancora in corso nella sagrestia, focolaio dell'incendio e correttamente ricostruita, dove si sta pazientemente ricomponendo l'altare lapideo devastato dalle fiamme.

ՔԵՐՈՎԲԷԱԿԱՆ ՔՆԱՐ - ՀՈԳԵՂԷՆ ՏԱՒԻՂ

Այս տաճարին մէջ տապանաքար մը կայ սեւ մարմարեայ, բայց թափանցիկ է՝ ինչպէս հայկական աչքերը, խորունկ՝ ինչպէս մեր ազգին հոգին: Այնտեղ Մխիթար թաղուած է. զինք շրջապատած են ոսկեղէն ձեղունն ու մարմարէ որմերը, վանական շէնքեր, սպիտակ սիւներ, երգ եւ աղօթք, պարտէզներ եւ այգիներ: Սուրբը սուրբերուն մէջն է. հայը մեր շուրջառն ու վանական սիրտն ունի, միանակ չէ, սպիտակ քօղի մը մէջ պլլուած է, ինչպէս հարսն իր ոսկեհիւս ամպին մէջ, ինչպէս աղօթքն երգով ամփոփուած:

Ես այսպէս կը հաւատամ. այս է ճշմրան որ զիս անսահմանին կը տանի: Մեզ ոչնչացնող բան չկայ. իմ հայրերս այսպէս հաւատացին եւ անմահութիւնը մեզի անուն ձրգեցին: Տարէք զիս այնտեղ՝ ուր սուրբ Ղազար անունով փոքրիկ կղզի մը կայ. օրհնուած հող ունի, ծուէն մը երկինք, ամպերէն կախուած տաճար մը՝ ոսկեղէն ձեղունով, հայ սուրբերու անունով դրոշմուած:

ՔԵՐՈՎԲԷԱԿԱՆ ՔՆԱՐ, ՀՈԳԵՂԷՆ ՏԱՒԻՂ...

Եղաւ ժամանակ՝ երբ աներեւոյթ Ոգի մը բռնեց իմ ձեռքէս. հրեշտա՞կ էր, չեմ գիտեր. ինձ համար երկինքէն իջած Ոգի՞ էր, չեմ գիտեր. բռնեց իմ աջ ձեռքէս, ինչպէս հայրն իր որդին կը քաշքշէ սար ու ձոր: Տարաւ ծովեր ու սարեր, աշխարհներ եւ ազգեր: Աչքերուս մէջ լաց չկար, սրտիս մէջ բան կասկած չկար: Աշխարհս ինձ համար մութ էր. սարերու հովիւի զաւակ էի. միայն սոյլերով ես ծաղիկ ու կանաչութիւն հմայած էի: Անոյշ երգ մը իմ ականջներուս մէջ կը դառնար, կը հնչէր. աչքերս հայ երկինքին մաքուր կապոյտն ունէին: Մեր գետերն ու լիճերը ինձ համար մկրտութեան աւազաններ էին. ես երջանիկ աշխարհի մը մէջ կ'ա-

© National Library of Armenia